

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 81'373.46: 811.19

Հ.Ց. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Քննվում են գիտատեխնիկական տերմինների հայերեն համարժեքների կառուցվածքային առանձնահատկությունները՝ պայմանավորված դրանց իմաստաբանական յուրահատկություններով:

Առանցքային բառեր. տերմինային համակարգայնություն, տերմինի իմաստային ճշգրտություն, տերմինի կառուցվածք:

Ներածություն: Գիտության ցանկացած բնագավառի տերմինահամակարգում մանրահամակարգերը կազմող տերմինները ստորակարգվում են սեռի-դասի-ենթադասի-տեսակի ստորակարգային սանդղակով, ընդհանուրից դեպի ավելի ու ավելի մասնավորն ընթացող գծային շարքով: Միաժամանակ, մանրահամակարգերը և դրանց առանձին տերմինները համակարգային հարաբերության մեջ են միմյանց նկատմամբ: Այսինքն՝ յուրաքանչյուր տերմինաբանություն համակարգային բնույթ ունի, ինչը պայմանավորված է տվյալ բնագավառի հասկացությունների համակարգային բնույթով [1, 2, 3]:

Տերմինային համակարգայնությունը դրսևորվում է ինչպես տերմինի իմաստային համապատասխանությամբ իր համակարգին, այնպես էլ տերմինակառուցվածքով, վերջինիս կազմում առկա բաղադրիչների իմաստային համապատասխանությամբ տվյալ համակարգին: Այսինքն՝ համակարգայնությունն ապահովվում է, եթե՝ 1. նոր տերմինը կազմվում է՝ հաշվի առնելով բարդության բաղադրիչների, ածանցների և տերմինային կապակցությունների բաղադրիչների իմաստային համապատասխանությունը տվյալ տերմինահամակարգին, 2. համագործածական բառերը կամ արմատները տերմինացնելիս (բառին նոր՝ տերմինային իմաստ վերագրելիս) հաշվի է առնվում համագործածական շերտում նրանց պատճառաբանվածության համապատասխանությունը տվյալ տերմինահամակարգի բովանդակությանը [4]: Ասվածը վերաբերում է ինչպես հասարակագիտական և բնագիտական, այնպես էլ գիտատեխնիկական բնագավառների տերմինահամակարգերին:

Տերմինների իմաստաբանական առանձնահատկությունները: Տերմինների համակարգայնությունն իրենց համակարգերում մեծ չափով ապահովվում է նրանց պատճառաբանվածությամբ: Պատճառաբանվածությունն առհասարակ

բնորոշում է բառի ներքին ձևը. որքանով է բառի ներքին իմաստը խոսողների կողմից մեկնաբանվում (կամ չի մեկնաբանվում): Ի տարբերություն համագործածական բառերի, տերմինների իմաստը գրեթե միշտ պատճառաբանված է: Դա պայմանավորված է նրանով, որ տերմինակերտման ընթացքում նոր տերմինը կառուցվում է գիտակցաբար, կամ լեզվում եղած բառին գիտակցաբար է տրվում նոր՝ տերմինային իմաստը: Տերմինաստեղծման այս գիտակցված գործընթացը, իր հերթին, պայմանավորված է նրանով, որ գիտական օբյեկտի արարումը՝ որպես մտավոր-մասնագիտական գործունեության արդյունք, գիտակցված գործընթաց է: Հետևաբար, տերմինները բառերի պես հենց այնպես ի հայտ չեն գալիս, այլ նպատակադրված ձևով հնարվում-հորինվում են: Տերմինները, ինչպես և պատճառաբանվող համագործածական բառերը, պատճառաբանվում են իրենց և բովանդակության, և արտահայտության պլաններում: Բովանդակության պլանում պատճառաբանվածությունը բնորոշվում է տերմինի ներքին ձևի և իմաստի համապատասխանության աստիճանով:

Մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության մեջ, պայմանավորված իրենց իմաստային առանձնահատկություններով, տերմինները ներկայանում են ընդհանուր կամ կոնկրետ գործողությունների, նույն գործողությունները կատարող գործիքների և այդ երկուսի հատկանիշների անվանում-տերմինների փնջերով: Եթե կա որևէ գործողություն նշանակող տերմին, ուրեմն կա այդ գործողությունը կատարող գործիքը նշանակող տերմին՝ սերված նույն տերմինից: Նման տերմինները մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության մեջ բազմաթիվ են. *ակոսում-ակոսիչ, ակոսափում-ակոսափիչ, բաժնավորում-բաժնավորիչ, գամում-գամիչ, դրոշմում-դրոշմ-դրոշմիչ-դրոշմոց, թակում-թակիչ, լայնացում-լայնիչ (անցքալայնում-անցքալայնիչ, եզրալայնում-եզրալայնիչ), խարտում-խարտոց, կոկում-կոկիչ, հափում-հափիչ, հղկում-հղկիչ, սրում-սրոց* և այլն: Նույն տերմինահամակարգում հաճախադեպ են նաև մեկ առանձին տերմինի՝ պարզածանցավոր տերմինային ճյուղավորումները, օրինակ, *ակոս* տերմինի փնջային ճյուղավորումը խոսքի մասերի կերտման պլանում՝ *ակոս-իկ, ակոս-ափ-իչ, ակոս-ափ-ում, ակոս-(ա)վոր-ում, ակոսիչ, ակոս-ում (գոյ.), ակոս-ափ, ակոս-(ա)վոր (ած.), ակոս-ած, ակոս-ափ-ած (դերբայ)*, իմաստային պլանում՝ գործիքի նշանակություն ունեն *ակոսիչ, ակոսափիչ*, գործողության հետևանքի նշանակություն՝ *ակոսած, ակոսափած, ակոսիկ*, հատկանիշի նշանակություն՝ *ակոսափ, ակոսավոր*, գործողության գաղափար են արտահայտում *ակոսում, ակոսափում, ակոսավորում* տերմինները:

Տերմինի պատճառաբանվածության ապահովման համար կարևոր է.

1. Տերմինը պետք է գործածելի լինի գիտության իր բնագավառի տեսության ոլորտում:

2. Տերմինի ներքին ձևով պայմանավորված՝ իմաստի մեջ պետք է դրսևորվեն հասկացության ամենաէական՝ անհրաժեշտ և բավարար հատկանիշները:

Բարձր աստիճանի պատճառաբանվածություն ունեցող տերմինի ներքին ձևը ակնհայտորեն նշում է իր հասկացության բովանդակությունը:

3. Համագործածական շերտի բառին տերմինի արժեք վերագրելու համար բառը նախապես պետք է տերմինավորվի, նրան պետք է տրվի մասնագիտական իմաստ, ինչը ապահովվում է տերմինացող բառին տրվող սահմանումով՝ որպես հասկացության բովանդակություն:

Մեքենագիտության-մեքենաշինության բնագավառում, պայմանավորված հասկացությունների (գործողություն կատարող առարկաների) բովանդակությամբ, հաճախադեպ գործածվող բաղադրիչներից են «մեքենա», «թրթռում», «-հան», «շարժ-» և այլ արմատներ ու բառեր, ինչպես, օրինակ՝ մեքենա-շարժիչ, մեքենամաս, մեքենա-օպերատոր և այլն, թրթռամշակում, թրթռակայունարար, թրթռամեքենա և այլն, պտուտակահան, ամրակահան, ակոսահան և այլն, շարժաբեր, ինքնաշարժ, շարժաթև և այլն:

Նույն բառերի, արմատների և ածանցների գործածությունը բարդ տերմինների և տերմինային կադապարների կազմում առաջ է բերում տերմինային շարքեր և փնջեր տվյալ համակարգում, որոնցով էլ ապահովվում է տվյալ միավորի համակարգայնությունն իր տերմինահամակարգում: Մյուս կողմից՝ նման տերմինները իրենց տերմինահամակարգը տարբերակում են մյուս համակարգերից: Օրինակ, մեքենագիտության-մեքենաշինության տերմինաբանության մեջ *ում*, *-ություն* բնորոշ ածանցներից առաջինը կազմում է բայանուններ, երկրորդը՝ գործողության ընդհանրական անվանում՝ *շարժում*, *միացում*, *նստավորում*, *աշխատունակություն*, *հավասարակշռություն*, *հեղազդեցություն* և այլն: Այստեղ, մեծ թիվ են կազմում նաև *-իչ*, *-ակ*, *-վածք* և այլ ածանցներով կազմված տերմինները (դրանցից առաջին երկուսը ցույց են տալիս առարկա, գործիք, երկրորդը՝ գործողության հետևանք) (*լայնիչ*, *կոկիչ*, *հղիչ*, *ամրակ*, *ներդրակ*, *պտուտակ*, *բեռնվածք*, *դրոշմվածք*, *ծովածք*, *կցվածք* և այլն):

Ներքին ձևը դրսևորվում է նաև տերմինի՝ որպես բառի կառուցվածքում՝ ըստ բառակազմիչ բաղադրիչների, որը խոսողների կողմից «տեսանելի» է դառնում այդ բաղադրիչների՝ 1) բառակազմական, 2) ձևաբանական և 3) շարահյուսական կապերի վերլուծությամբ: Իսկ այդ վերլուծությունը նպաստում է, որ խոսողը, և առաջին հերթին, մասնագիտական համայնքն ըմբռնի, գիտակցի տերմինի իմաստը:

Արտահայտության պլանում տերմինը պատճառաբանված է, եթե նրա և իր համակարգի մյուս տերմինների միջև առկա է բառակազմական որոշակի կապ, որով էլ տերմինը գտնում է իր տեղը տերմինահամակարգում:

Տերմինաբանության մեջ պատճառաբանվող են դառնում համագործածական շերտի չպատճառաբանվող բառերը ևս, օրինակ, (բռունցք բառի «բուռ» արմատը պատճառաբանվող չէ), երբ նրանց տերմինային իմաստ է վերագրվում: Այս դեպքում պատճառաբանվածությունն ապահովվում է շնորհիվ այն բանի, որ համագործածական շերտում արդեն իսկ յուրացված բառը այստեղ ձեռք է բերում ինչ-որ չափով իր նախնական իմաստով կողմնորոշված տերմինային իմաստ: *Բռունցքը* մեքենագիտության, մեքենաշինության մեջ, ռոբոտ-մանիպուլյատորներում և մեխատրոնիկայում նշում է մի առարկա՝ բնորոշ «բռունցք» համագործածական բառով արտահայտվող հասկացությանը: Այսինքն՝ բռունցք բառը տերմինանալիս ինչ-որ չափով պահպանել է համագործածական շերտում իր արտահայտած թեկուզև չպատճառաբանվող իմաստի յուրացվածության աստիճանը, ինչը նպաստում է տերմինի յուրացմանը [4]:

Այսպիսով, տերմինների համակարգվածությունն ու պատճառաբանվածությունը ամեն մի բնագավառում ապահովվում են տերմինների՝ տվյալ բնագավառին բնորոշ ձևաիմաստային առանձնահատկություններով: Որքան համակարգված է ինքը բնագավառն իր հասկացություններով, այնքան բարձր աստիճանի համակարգայնություն ու պատճառաբանվածություն են դրսևորում դրանց տերմինները, և այդքան ավելի հեշտ են դրանք ըմբռնվում ու յուրացվում իրենց բնագավառում: Տերմինների այդ համակարգայնությամբ ու պատճառաբանվածությամբ են է պայմանավորվում նրանց՝ իբրև բառերի կառուցվածքը:

Տերմինների կառուցվածքային առանձնահատկությունները: Տերմիններն ըստ կազմության ընդունվում են որպես միաբառ և տերմինային կապակցությամբ արտահայտված միավորներ:

Տերմինակազմության օրինաչափությունները դիտարկենք մեքենագիտական-մեքենաշինական տերմինահամակարգի իրողություններով՝ այս աշխատանքում անդրադառնալով միայն միաբառ տերմինների առանձնահատկություններին [5, 6, 7]:

Միաբառ տերմիններն ըստ կառուցվածքի լինում են. պարզ, բարդ, ածանցավոր, այդ թվում՝ նախածանցավոր (պարզ, բարդ), վերջածանցավոր (պարզ, բարդ), նախածանցավոր և վերջածանցավոր կամ համածանցավոր (պարզ, բարդ), բազմածանցավոր (պարզ, բարդ): Կառուցվածքային առումով այս տերմինահամակարգում առանձնանում են նաև դերբայներով (հարակատար, ենթակայական) և գոյականի հոգնակի թվով արտահայտված տերմինները:

Դերբայով արտահայտված տերմիններ. *ամբողջագլոցած, գամաքանդված, ինքնարեղակայվող, խաչահարվող, կշռաչափված, հարմարակցված, ճշտադրած, սեպապնդված, փոշեմամլած:*

Գոյականի հոգնակի թվով արտահայտված տերմիններ: *Մեքենագիտական-մեքենաշինական* տերմինաբանության մեջ հոգնակիով արտահայտված տերմինները հազվադեպ են՝ *մեքենամասեր, մանրամասեր*, սակայն այստեղ կան տերմիններ, որոնց հոգնակիները կարող են արտահայտել համապատասխան սարքերի կամ գործողությունների դասերը, տեսակները, ինչպես, օրինակ, *մեքենաներ, մեխանիզմներ, ադամանակներ, միացումներ, տեխնոլոգիաներ*: Սրանց եզակիները մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության մեջ առանձին, ինքնուրույն տերմիններ են:

ՊԱՐԶ (ԱՐՄԱՏԱԿԱՆ) ՏԵՐՄԻՆՆԵՐ: Տերմինների այս խումբը կազմում են լեզվում եղած պարզ կամ արմատական բառերը, որոնք իմաստափոխության ճանապարհով տերմինացել են: Իբրև տերմին առնվելիս դրանցից շատերը համաժամանակյա մոտեցմամբ ընդունվում են որպես պարզ բառեր՝ առանց ծագումնաբանական կամ ստուգաբանական վերլուծությունների. *այտ, ասեղ, ափսամ, բազուկ, բարձ, գլուխ, դահուկ, դանակ, դաստակ, երես, թաս, թմբուկ, թև*:

ԲԱՐԴ ՏԵՐՄԻՆՆԵՐ: Տերմինների այս խումբը կարելի է քննել բարդությունների կառուցվածքային հետևյալ առանձնահատկությունների դասակարգմամբ [2, 8].

1. Բարդ տերմինների վերլուծություն՝ ըստ կառուցվածքի: Ինչպես հայերենի բառաբարդմանն առհասարակ, այնպես էլ տերմինաբանությանը գերազանցապես բնորոշ են ստորադասական բնույթի համադրական բարդությունները: Վերլուծական բարդություններից հանդիպում են հիմնականում հարադրավորներ՝ *կոող-դրոշմող, մարդ-մեքենա, հեղադարձ-առաջընթաց*, Համադրական բարդություններից կցականներ նույնպես հազվադեպ են՝ *կարճպարբերական, հարթ-գուգահեռ, դուրսխփում*:

2. Բարդ տերմինների վերլուծություն՝ ըստ բաղադրիչների միացման միջոցի: Որպես իսկական բարդություններ՝ տերմինները հանդես են գալիս հոդակապով և առանց հոդակապի:

- Հոդակապով իսկական բարդություններ. *բազմապտույտ, գազածուծ, գամամուրճ*: Հանդիպում են հոդակապի հնչյունափոխված դեպքեր՝ *հաշվեկշիռ, գոտեկապ, շոգեպուրբին, փոշեխողովակ*:

Հոդակապը բարդ տերմիններում սովորաբար իմաստատարբերակիչ նշանակություն չունի (*եռհողակապ-եռահողակապ, շրջտաշում-շրջատաշում, ջրթափ-ջրաթափ*, և հազվադեպ կարող է ձեռք բերել այդպիսի նշանակություն՝ *քարահատ (մեքենա)-քարհատ* (մարդ):

- Անհոդակապ իսկական բարդություններից են՝ *բազմընթաց, բեռնամբարձ, քարմաղ*: Սրանց մի մասը հանդես է գալիս առաջին բաղադրիչի հնչյունափոխված տարբերակով՝ *երկժանի, բազմօղակ, ջրամբարձ, ցրցողան*:

3. Բարդ տերմինների վերլուծություն՝ ըստ բաղադրիչների քանակի:

Ըստ բաղադրիչների քանակի՝ բարդ տերմինները լինում են երկարմատ՝ *ամրակապ, աստղանիվ, պատճենաստ, ջրապոմպ, սեպափոկ*, եռարմատ՝ *մանրակարծրաչափ, ռազմահաճանավ, գնդասեղաձև*:

Չորս և ավելի արմատներով բարդությունները բնորոշ չեն ինչպես առհասարակ հայերենի բառակազմությանը, այնպես էլ տերմինակազմությանը:

4. Բարդ տերմինների վերլուծություն ըստ խոսքի մասային պատկանելության: Բարդ տերմինները հիմնականում արտահայտված են գոյականով և ածականով: Գոյականով արտահայտված բարդ տերմինների գերակշռությունը գիտության ցանկացած բնագավառի տերմինաբանության մեջ բացատրվում է գոյականի արտահայտած իմաստային առանձնահատկությամբ. գոյականն օժտված է վերացարկման ամենաբարձր աստիճանով:

Ինչպես տեսանք, բարդ տերմիններին ևս բնորոշ է դերբայով (հարակատար, ենթակայական) արտահայտությունը՝ որոշչային կիրառությամբ: Մյուս խոսքի մասերը (թվական, դերանուն, մակբայ) հանդես են գալիս բարդության կազմում՝ բաղադրված գոյականի, ածականի կամ բայարմատի հետ:

5. Բարդ տերմինների վերլուծություն՝ ըստ բաղադրիչների խոսքի մասային պատկանելության: Այս դասակարգումը կարելի է կատարել ըստ ձևաբանական հետևյալ կաղապարների. ա) Գ+Գ (գոյ., գոյ.). *արամնանիվ, գլխահեղույս, գչրածող, ժամուլաք, օղակապ, կոնակերպ, օղաձև*. բ) Գ+Բ (գոյ.+բայ, բայարմատ, նաև դերբայ). *գայլիկոնակալ, պտուղակահան, ավմաստակիր, ակոսահան, արամնաքերթ, բեռնամբարձ, գամաքանդ, նշանափոխ*. գ) Ա+Ա (ած.+ած.). *դյուրանջապ(ելի), հարթզուգահեռ, ուղղաձիգ*. դ) Ա+Գ (ած.+գոյ.). *կլորաքիթ, կցաշուրթ, շեղադամ, սրածայր, ցցածող, ուղղագիծ, ծանրամուրձ*. ե) Ա+Բ (ած.+բայ, նաև դերբայ). *արագագործ, զուգամիտող, կլորահապ, կուպամշակ, հարմարադրած, սևադաշ, հարթացույց*. զ) Բ+Գ (բայ+գոյ.). *բռնալետ, թափանիվ, թրթռամաղ, շարժաթև, ստուգանմուշ, փպասալ, քսայուղ*. է) Բ+Բ (բայ+բայ, նաև դերբայ). *դարձաշարժ, շարժանց, շարժաբեր, կանգառ, սահաթիռ, քերթադաշ, նստադիր*. ը) Բ+Ա (բայ+ած.). *հղկունակ*. թ) Թ+Գ (թվ.+գոյ.). *երկեղջյուր, երկդող, եռադամ, եռասունի, միառելս, միակողմ, վեցաթիվ, ութանիստ*. ժ) Թ+Ա (թվ.+ած.). *երկշեղ, միանգամյա, միաշեղ*. ժա) Թ+Բ (թվ.+բայ). *երկընթաց, երկհոս, եռընթաց, միապարիկ*. ժբ) Դ+Բ (դերանուն+բայարմատ). *ինքնաշխատ, ինքնաշարժ, ինքնաքարշ, ինքնընթաց, ինքնագնաց, ինքնաթիռ, ինքնահոս*. ժգ) Մ+Գ (մկբ.+գոյ.). *կրկնափական, հեղցավրկ, հեղհարված*. ժդ) Մ+Բ (մկբ.+բայարմատ). *առաջընթաց, կողմնադար, կրկնափոփոխ, հեղահապ, հեղադարձ, վերհան, ուղղահոս*:

6. Բարդ տերմինների վերլուծություն՝ ըստ բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների:

Բարդ տերմինների բաղադրիչները շարահյուսված են կամ համադասական, կամ ստորադասական կապով: Համադասական կապ՝ որոշիչ-որոշյալի հարաբերությամբ, արտահայտում են Ա+Գ, Թ+Ա, Մ+Գ, Բ+Գ, երբեմն նաև՝ Գ+Գ անվանական գերադաս բաղադրիչներով բարդությունները:

Բարդ տերմիններում ստորադասական կապ դրսևորող գերադաս բաղադրիչներն արտահայտված են ինչպես անուն խոսքի մասերով, այնպես էլ բայով:

ա) Անվանական գերադաս բաղադրիչներով բարդ տերմիններն արտահայտում են հատկացուցիչ-հատկացյալի հարաբերություն հետևյալ բաղադրություններով. Գ+Գ՝ *անվապռունկ, ավազաման, կաղապարարկղ, Բ+Գ՝ դարձասալ, ծուլամեքենա, հեծանիվ:*

բ) Առավել բարդ հարաբերություններ են արտահայտում բայական գերադաս բաղադրիչներով բարդությունները. գործողության օբյեկտ-գործողություն. Գ+Բ՝ *ակոսահան, հարթացույց, շարժաբեր, գործողության կատարման ձև. Ա+Բ՝ առաջընթաց, արագամաշ, շեղդիր, Մ+Բ՝ ամբողջածույլ, վերնահատ, Գ+Բ՝ հողմադաց, թափաշարժ, Բ+Բ՝ քերթափաշ, սահաթիռ. գործողության ինքնուրույն կատարում. Դ+Բ՝ ինքնագնաց, ինքնաշարժ, ինքնաքարշ. գործողության կատարման քանակ/չափ. Թ+Բ՝ երկրնթաց, եղընթաց, Մ+Բ՝ բազմընթաց:*

ԱԾԱՆՑԱՎՈՐ ՏԵՐՄԻՆՆԵՐ: Ածանցավոր տերմինները երեք տեսակ են՝ ա) նախածանցավոր, բ) վերջածանցավոր, գ) նախածանցավոր և վերջածանցավոր կամ համածանցավոր, բազմածանցավոր [9, 10]:

Ա. ՊԱՐԶ ՆԱԽԱԾԱՆՑԱՎՈՐ ՏԵՐՄԻՆՆԵՐ. **ան-** անկափույր, անհարված, անշարժ, **անդր-** անդրաձիգ, անդրահատ, **առ-**առմուտ, առդիր, առաձիգ, **արտ-**արտահոս, արտամուղ, արտաշարժ, **գեր-**գերպտույտ, գերարագ, **ենթ-**ենթակալ, ենթակիր, **ընդ-** ընդկախ, **հակ-**հակաբեռ, հակակշիռ, հակահոս, հակաշարժ, **համ-**համակարգ, համազոր, համակշռված, **հար-**հարաչափ, **մակ-**մակնիշ, մակաբույծ, մակադիր, **նախ-**նախալարված, նախապոմպ, նախատաշ, **ներ-**ներդիր, ներթող, ներտաշ, **վեր-**վերադարձ, վերածված, վերամբարձ, վերընթաց, վերհան, **տար-**տարաշարժ, **տրամ-**տրամագիր, տրամագիծ, տրամաչափ:

Բ. ՊԱՐԶ ՎԵՐՋԱԾԱՆՑԱՎՈՐ ՏԵՐՄԻՆՆԵՐ. **-ածո** – կռածո, ձուլածո, հանածո, **-ակ** – անվակ, արգելակ, բռնակ, բուֆակ, դարձակ, լեզվակ, նմանակ, **-ական** –թրթռական, շփական, պտտական, ստատիկական, **-ային** – թրթռային, իլային, խառատային, **-ան** – զսպան, մղան, սողան, փական, **-անակ** – ճոճանակ, **-իկ** – գլանիկ, եղջյուրիկ, թաթիկ, կարապիկ, **-իչ** – ակոսիչ, ամբարձիչ, բաշխիչ, գամիչ, դարձիչ, զտիչ, թակիչ, լայնիչ, հղկիչ, մամլիչ, շտկիչ, պրկիչ, սևեռիչ, քերթիչ, **-ոց** – դրոշմոց, խարտոց, հենոց, մխոց, սրոց, **-վածք** – բեռնվածք, գլանվածք, ծովածք, ձուլվածք, պրկվածք, **-վոր** – ակոսավոր, այտավոր, թրթուրավոր, -

ույթյուն – ամրույթյուն, ազդեցություն, գործողություն, լարվածություն, կարծրություն, **-ուկ** – լայնուկ, խցուկ, չորուկ, ցցուկ, **-ում** – ակոսում, ճկում, մամլում, ոլորում, ֆրեզում և այլն, **-ք** –թևք, լայնք, ծալք, հիմք, մուտք, ոլորք, սահք, սողք և այլն:

Գ. ՊԱՐԶ ՆԱԽԱԾԱՆՑԱՎՈՐ ԵՎ ՎԵՐՋԱԾԱՆՑԱՎՈՐ (ՀԱՄԱԾԱՆՑԱՎՈՐ) ՏԵՐՄԻՆՆԵՐ. Այս տերմինները կարելի է խմբավորել ըստ նախածանցների, որոնք զուգորդվում են տարբեր վերջածանցների հետ. **ան-** անգլխիկ, անկարան, անբացակ, անխզովի, **առ-** առածգական, առբերիչ, առձգում, առձգիչ, **արտ-** արտահիրիչ, արտամղվածք, արտահանիչ, **ենթ-** ենթահանգույց, ենթահատիչ, ենթահատում, **ընդ-** ընդարձակում, ընդգրկում, ընդլայնում, ընդփորվածք, **թեր-** թերբեռնում, թերհատում, **հակ-** հակաաղմկային, հակազդում, հակազսպանակ, հակաթրթռիչ, հակածանրուկ, հակաճնշում, հակամաշում, հակաշփական, հակասառիչ, **համ-** համագրում, համադրում, համալարում, համաձուլվածք, համապիտանի, **մակ-** մակայրում, մակակոփվածք, մակահատվածք, մակահպում, մակաձողիկ, մակասողցվածք, **նախ-** նախապատրաստվածք, **ներ-** ներդրակ, ներկտրովի, ներմղում, ներմղիչ, ներճում, ներճնշում, ներճկում, ներտաշում, ներփորում, ներփչում, **վեր-** վերաբեռնիչ, վերագամիչ, վերականգնելի, վերասրում, **տար-** տարաթողում, տարածում, տարէջք, **տրամ-** տրամաբանական, տրամագծային, **փոխ-** փոխանցիչ, փոխանցում, փոխարկիչ, փոխբեռնիչ:

Դ. ՊԱՐԶ ԲԱԶՄԱԾԱՆՑԱՎՈՐ ՏԵՐՄԻՆՆԵՐ. Այս տերմինները կարելի է խմբավորել ըստ վերջածանցների. **-ակ** – փոխհաղորդակ, **-ային** – ամբարձիչային, արտահանգուցային, բարձակային, դարձուկային, պտուտակային, տարահրումային, **-անակ** - հակազսպանակ, **-ելի** – անկարգավորելի, **-իչ** –ակոսավորիչ, կենտրոնավորիչ, կցորդիչ, ներպարուրակիչ, ուղղորդիչ, փոխհաղորդիչ, **-վոր** – ականոցավոր, բարձակավոր, բռնցքավոր, կոճղակավոր, փոխագուցավոր, **-ույթյուն** – անձգելիություն, գերբեռնելիություն, գերկայունություն, համատեղելիություն, հուսալիություն, մածուցիկություն, մրրկայնություն, **-ում** – ակոսավորում, դիրքավորում, լցավորում, կենտրոնավորում, ներպտուտակում, պտուտակում, վերասարքավորում:

Ե. ԲԱՐԴ ՎԵՐՋԱԾԱՆՑԱՎՈՐ ՏԵՐՄԻՆՆԵՐ. **-ակ** – բազմօղակ, ձգահողովակ, ոտնանմանակ, սառնազդակ, տափօղակ, **-ական** –առանցքաչափական, կոնապտտական, օդաճնշական, **-ային** – ավազաշիթային, շոգեուժային, ջրապոմպային, **-ան** – ամբարձահեծան, գամակարան, ձգափական, շոգեխցան, **-իկ** – դանակագլխիկ, ծնկավզիկ, նեցուկագլանիկ, շրջուսիկ, **-իչ** – անցքալայնիչ, անցքակոկիչ, բեռնամբարձիչ, դարձափոխիչ, թրթռագրիչ, ինքնայուղիչ, կիպահղկիչ, հողմաշարժիչ, ջրամղիչ, տաշեղաջարդիչ, փոշեզատիչ, **-ոց** – եզրակտրոց, թավշախարտոց, հրահալոց, սուզամխոց, **-վածք** – աղեղաճկվածք,

թրթռագլոցվածք, կիպահղկվածք, պարզահյուսվածք, **-վոր** – գլանատամնավոր, երկձնկավոր, սեպափոկավոր, **-ույթյուն** – աշխատունակություն, դարձափոխություն, դիմադրություն, հետազոտություն, **-ուկ** – ապակեպատրաստուկ, փողալայնուկ, օդախցուկ, **-ում** – ամրակապում, ատամնահղկում, գամաքանդում, երկայնաձգում, ինքնամատուցում, լրահղկում, ճշտադրում, միջաձգում, փչամաքրում, քերամաշում, **-ք** – բազմաչք, կանգառք, հետզլորք, վարնետք:

Զ. ԲԱՐԴ ՆԱԽԱԾԱՆՑԱՎՈՐ ԵՎ ՎԵՐՋԱԾԱՆՑԱՎՈՐ (ՀԱՄԱԾԱՆՑԱՎՈՐ) ՏԵՐՄԻՆՆԵՐ. **ան-** անհավասարակշռվածություն, անհետզլորք, անջրանցիկ, **առ-** առանցքաչափական, առանցքապտտում, առաջընթացք, **գեր-** գերբեռնում, գերեռակալում, գերտաքացում, **վեր-** վերասարքաբերում, վերատրամաչափարկում, վերատրամաչափարկիչ:

Է. ԲԱՐԴ ԲԱԶՄԱԾԱՆՑԱՎՈՐ ՏԵՐՄԻՆՆԵՐ. **-ային** – շուռտվիկասողնակային, **-իչ** – կիսակցորդիչ, **-վոր** – շուռտվիկասողնակավոր, տուրբինապտուտակավոր, **-ույթյուն** – թրթռադիմացկունություն, յուղալուծելիություն, սողքակայունություն, **-ում** – հետպտուտակում:

Բերված օրինակներին համապատասխան՝ կարող ենք ներկայացնել տերմինահամակարգերում ածանցների գործունության ընդհանրական պատկերը (աղյուսակ):

Աղյուսակ

Ածանցների գործունության պարկերը մեքենագիտական-մեքենաշինական տերմինահամակարգում (ըստ գործունության հերթագայության)

Պ ա ղ		Բ ա ղ	
Նախածանցներ	Վերջածանցներ	Նախածանցներ	Վերջածանցներ
Ան-	-Ում		-Իչ
Համ-	-Իչ		-Ում
Հակ-	-Ություն		-Ություն
Վեր-	-Ակ		-Ակ
	-Ային		-Ային
	-Իկ		-Ական
	-Վոր		-Վոր
	-Վածք		-Վածք
	-Ոց		-Ք
Բազմածանցավոր (միայն վերջածանցմամբ)		Բազմածանցավոր (միայն վերջածանցմամբ)	
-Իչ		-Ություն	
-Ում		-Ում	
-Ություն		-Վոր	
-Ային		-Ային	

Աղյուսակի շարունակությունը

Պ ա Ր Ղ		Բ ա Ր Ղ	
Նախաձանցներ	Վերջաձանցներ	Նախաձանցներ	Վերջաձանցներ
Աձանցների զուգորդմամբ (նախաձ.+վերջաձ.) Հակ+ական Հակ+իչ Հակ+ում Համ+ում Արտ+իչ Առ+իչ Մակ+վածք Վեր+իչ Փոխ+իչ		Աձանցների զուգորդմամբ (նախաձ.+վերջաձ.) Գեր+ում Վեր+ում	

Աղյուսակը թույլ է տալիս կատարել այս տերմինահամակարգում աձանցների գործածության առանձնահատկությունների վերաբերյալ հետևյալ եզրակացությունները.

1. ա) Նախաձանցներն առավել գործուն են պարզ և պարզաձանցավոր տերմիններից նոր տերմիններ կերտելիս, բ) նախաձանցները սակավ դեպքերում են տերմիններ կերտում բարդ վերջաձանցավոր տերմիններից (շարքեր են կազմում միայն առանձին նախաձանցներ), գ) բազմաձանցավոր կառույցներում նախաձանցները գրեթե հանդես չեն գալիս (շարքեր չեն կազմում):

2. ա) Վերջաձանցները գործուն են պարզ, պարզվերջաձանցավոր, նաև բարդվերջաձանցավոր տերմիններից նոր տերմիններ կերտելիս, բ) վերջաձանցները բազմաձանցավոր տերմիններ են կերտում առավելապես պարզվերջաձանցավոր տերմիններից (մնացած դեպքերում շարքեր չեն կազմում):

Այսպիսով.

1. Մեքենագիտական-մեքենաշինական տերմինաբանության մեջ, պայմանավորված տերմինահամակարգի իմաստաբանական առանձնահատկություններով՝ զգալի են կենցաղային և արհեստների վերաբերող հասկացություններ նշանակող բառերը:

2. Մեքենագիտական-մեքենաշինական համակարգին բնորոշ են դերբայով արտահայտված տերմիններ, իսկ տերմինների հոգնակիները նշում են առարկաների տեսակները, դասերը միայն:

3. Մեքենագիտական-մեքենաշինական տերմինահամակարգում առանձնապես մեծ չէ հայերեն արմատական կամ պարզ բառերից իմաստափոխության

ճանապարհով առաջացած տերմինների թվաքանակը: Սակայն պարզ տերմինները, լինելով բառապաշարի համագործածական շերտի բառեր, հարմար են որպես տերմին գործածելու առումով, քանի որ յուրացված են որպես բառեր և հաճախադեպ են գործածվում, հեշտ են մտապահվում, սեղմ են, այսինքն՝ բավարարում են տերմինակերտման որոշակի պահանջները:

4. Բարդ տերմինների մեջ գերակշռում են հոդակապով իսկական բարդությունները, որոնց գերակշիռ մասը երկբաղադրիչ են՝ արտահայտված հիմնականում գոյականով և ածականով (հանդիպում են նաև հարակատար, ենթակայական դերբայներով արտահայտված բարդ տերմիններ): Քիչ քանակությամբ, բայց հանդիպում են նաև եռարմատ, քառարմատ տերմիններ:

Մեքենագիտական-մեքենաշինական համակարգում, ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության, գերակշռում են Գ+Գ, Ա+Գ, Գ+Բ, Դ+Բ, Թ+Բ, Ա+Բ, Բ+Գ, Թ+Գ, Մ+Բ, Բ+Բ բաղադրությունները: Բարդ տերմինները մեծ մասամբ իսկական բարդություններ են, քանի որ իսկական բարդությունը վերացական մտածողության արգասիք է: Պայմանավորված այդ հանգամանքով՝ այս տերմինները բավարարում են տերմինակերտման գիտական պահանջներից մի քանիսը՝ ճշգրտություն, ստույգություն, բաղադրիչների բազմիմաստության բացառում:

5. Միաբառ տերմիններում ակնհայտ գերակշռություն ունեն ածանցավոր (ածանցման զանազան դրսևորումներով) տերմինները, որոնք լայնորեն գործածվում են նաև տերմինային կապակցություններում: Տերմինակերտման մեջ նախաձանցներն ունեն գերազանցապես իմաստափոխական, վերջաձանցները՝ գերազանցապես գործառական-փոխանցական արժեք:

Հայերենի ոչ բոլոր նախաձանցներն են մասնակցում տերմինակերտմանը: Գործուն նախաձանցները ոչ բոլոր խոսքի մասերի հետ կարող են կազմել տերմիններ: Առավել կենսունակ են *ան-*, *համ-*, *հակ-*, *ներ-*, *վեր-* նախաձանցները: Որոշ նախաձանցներ առավել գործուն են գոյականի, մյուսները՝ բայի կամ բայարմատի, որոշ մասը՝ ածականի հետ միանալիս: Այս տերմինաբանության մեջ առանձնապես գործուն չեն նաև բառակազմության առումով կենսունակ նախաձանցները: Նախաձանցման սահմանափակությունը տերմինակերտման գործընթացում պայմանավորված է առհասարակ բառակազմության մեջ դրսևորվող նրա յուրահատկությամբ: Այս տերմինաբանության մեջ կենսունակ են հատկապես առարկա (կոնկրետ և վերացական), նրա հատկանիշ (կոնկրետ և վերացական), գործողության անուն, արդյունք, գործողության ներունակություն ցույց տվող ածանցները, որոնք, հիմնականում դրվելով գոյականի, ածականի, բայի և նրանց արմատների վրա, կազմում են տերմիններ գոյականի և ածականի նշանակությամբ:

Այս հանգամանքը պայմանավորված է ինչպես ածանցների իմաստային՝ գոյական, ածական կազմելու ունակությամբ, որոնցով արտահայտվում են տերմինները, այնպես էլ այս տերմինահամակարգի իմաստաբանական առանձնահատկություններով: Համակարգերից մեքենագիտական տերմինաբանության մեջ վերացական հասկացություններ՝ հատկանիշ և գործողության հատկանիշ կամ ներունակություն ցույց տվող տերմինները կառուցվում են *-ական, -ային, -ություն, մասամբ՝ -վոր* վերջածանցներով, իսկ կոնկրետ գործողություն, գործողություն կատարող կոնկրետ առարկա, գործողության հետևանք, գործիք կամ գործողության կատարման կոնկրետ հատկանիշ ցույց տվող տերմինները՝ *-ակ, -իչ, -ուկ, -ում* ածանցներով: Այսինքն՝ այս համակարգում նշված ածանցների գործածությունը պայմանավորված է ինչպես ներլեզվական, այնպես էլ արտալեզվական գործոններով: Նույնը՝ նաև նախաածանցների դեպքում: *Ան-* ժխտական նախածանցի հանդես գալը ինչպես նաև *հակ-* ժխտական իմաստով նախածանցի լայն գործածությունը մեքենագիտական-մեքենաշինական համակարգում նույնպես պայմանավորված է դրանց իմաստաբանական առանձնահատկություններով. եթե կա որևէ առարկայի, գործողության դրական հատկանիշ, գործողություն կատարող առարկա, ապա կա նաև դրանց հակառակ հատկանիշը, գործողությունը կամ հակառակ գործողություն կատարող առարկան:

Կատարված վերլուծությունը կարող է օգտակար լինել նոր տերմիններ կառուցելիս, որոնք պետք է համակարգային հարաբերության մեջ լինեն արդեն իսկ գործող մանրահամակարգերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղայան Է.** Տերմինագիտություն. Դասախոսություն. - Ե., 1978:
2. **Гринев С. В.** Основы лексикографического описания терминосистем: Дис... док. фил. наук.- М., 1990.
3. **Պետրոսյան Հ.Ց.** Հայերեն մեքենագիտական-մեքենաշինական տերմինների իմաստաբանական-կառուցվածքային և գործառական վերլուծություն. Թեկն. ատենախոս., 2007.- 157 էջ:
4. **Պետրոսյան Հ.Ց.** Տերմինագիտության հիմունքներ. Դասագիրք.- Եր., 2010:
5. **Теория механизмов и машин.** Терминология // Сборник рекомендуемых терминов. М., 1983.- Вып. 99.
6. Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան / **Ջ. Հացագործյան և ուրիշ.** - Ե., 1988:
7. **Սարգսյան Յու., Հովումյան Ն., Պետրոսյան Հ.** Մեխանիզմների և մեքենաների տեսություն. Անգլերեն-հայերեն-ռուսերեն տերմինարան.- Ե., 2009:
8. **Խասապետյան Ս.** Բարդ տերմինների կառուցվածքային և իմաստաբանական քննություն // ԲԵՀ.- Ե., 1980.- N 1:

9. **Փալստյան Ս.** «Խառը» («նախաձանցավերջաձանցավոր» և «բարդաձանց») բաղադրությունները հայերենում // ԲԵՀ.- Ե., 1997.- N 3:
10. **Փալստյան Ս.** Բուն (իսկական) բարդ և ածանցավոր բառերի կազմության քայլերի բանաձևման փորձ // ԲԵՀ.- Ե., 2002.- N 1:

А.Ц. ПЕТРОСЯН

СТРУКТУРНО-СМЫСЛОВОЙ АНАЛИЗ АРМЯНСКИХ НАУЧНО-ТЕХНИЧЕСКИХ ТЕРМИНОВ

Обсуждаются структурные особенности армянских эквивалентов научно-технических терминов, которые обусловлены их смысловыми признаками.

Ключевые слова: системность терминов, смысловая точность термина, структура термина.

H.Ts. PETROSYAN

A SEMANTIC AND STRUCTURAL ANALYSIS OF ARMENIAN SCIENTIFIC AND TECHNICAL TERMS

The structural characteristics of the Armenian equivalents of scientific and technical terms are considered conditioned by their semantic peculiarities.

Keywords: systematic nature of terms, semantic accuracy of a term, term structure.

ՀՏԴ 81'373.46: 811.111

Հ.Ս. ՂԱԶՈՅԱՆ

ԱՆԳԼԵՐԵՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քննվում են անգլերեն տեխնիկական տերմինների իմաստային որոշ առանձնահատկություններ: Ցույց են տրվում բառի տերմինացման որոշ իրողություններ անգլերենում:

Առանցքային բառեր. տերմինաբանություն, տեխնիկական տերմին, նշանակություն, հասկացություն, դասակարգում, մենիմաստ բառեր, բազմիմաստ բառեր, գիտակարգ:

Ներածություն: Տեխնիկական տերմինների ընտրության և կառուցման համար կան որոշակի պահանջներ: Այդ պահանջները բավարարող ցանկացած տերմինի ձևավորման համար օգտագործվում են լեզվական տարբեր միջոցներ: Գիտատեխնիկական տարբեր բանազավառներում և գիտակարգերում տերմինաբանության վերլուծությունը ցույց է տալիս, որ տեխնիկական տերմինների կազմավորման տարածված եղանակներից են **ածանցումը, բառաբարդումը, հապավումը**